# ԱՄԵՆ ՍԱԶԻ ՄԵՋԸՆ ԳՈՎԱԾ







Ամեն սազի մեջըն գոված, դուն թամամ տասն իս, քամա՛նչա,
Նաքազ մարթ քիզ չի կանա տեսնի՝ դուն նըրա պասն իս, քամա՛նչա.
Ղա՛ստ արա՝ է՛լ լավ օրերուն էդիվըն հասնիս, քամա՛նչա,
Քիզ ինծնից ո՞վ կանա խըլի՝ աշուղի բասն իս, քամա՛նչա:

Անգաձըտ էրծաթեն պիտի, գըլուխըտ ջավահիր քարած,
Կութըտ շիրմայեմեն պիտի, փուրըտ սադափով նաղշ արած,
Սիմըտ օ՛սկեն քաշած պիտի, էրկաթըտ փանջարա արած,
Օչով ղիմեթըտ չի գիդի. լալ ու ալմասն իս, քամա՛նչա:

Ծիպուտըտ վարաղնած պիտի՝ թաիր ունենա հազար ռանգով.
Ձարըտ ռաշի կուդեն պիտի, վուր դուն խոսիս քաղցըր հանգով.
Շատին զարթուն կու լուսացնիս, շատին կու քընեցնիս բանգով.
Անուշահամ գինով լիքըն դուն օսկե թասն իս, քամա՛նչա:

Ածողիտ է՛րկու կու շինիս, առաչ չայի, ղափա զուգիս,
Կու մեծըրվիս այվընումըն, պարապ վախտի րափա զուգիս.
Ցիփ վեր գուքաս մեջլիսումըն, քաղցըր զող ու սափա զուգիս.
Բոլորքըտ գոզալնիր շարած, մեջլիսի կեսն իս, քամա՛նչա:

Շատ տըխուր սիրտ կու խընդացնիս, կու կըտրիս հիվընդի դողըն.
Ցիփ քաղցըր ծայնըտ վիր կոնիս, բաց կուլի հիդըտ խաղողըն.
Խալխին էս իլթիմազն արա՝ ասին. «Ա՛պրի քու ածողըն».
Քանի սաղ է Սայաթ-Նովեն, շատ բան կու տեսնիս, քամա՛նչա: